

**ԿԱՐԾԻՔ**  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ**

**Նարինե Բագրատի Պետրոսյանի Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների  
տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի համար ներկայացված «Կառուցվածքային բարեփոխումների  
մակրոտնտեսական հետևանքների գնահատումը Հայաստանի Հանրապետությունում»  
թեմայով ատենախոսության վերաբերյալ**

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:**

Կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների գնահատման հիմնահարցերի ուսումնասիրումը ժամանակակից տնտեսագիտության կարևոր և արդիական ուղղություններից է: Կառուցվածքային բարեփոխումները ներառում են տնտեսության խորքային փոփոխություններ՝ ինստիտուցիոնալ միջավայրի բարելավում, շուկաների ազատականացում, հարկաբյուջետային և ֆինանսական համակարգերի վերափոխում, աշխատաշուկայի կարգավորումների արդիականացում, պետական կառավարման արդյունավետության բարձրացում և այլն: Դրանք էական ազդեցություն ունեն տնտեսական աճի, արտադրողականության, զբաղվածության և բարեկեցության վրա: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունները հաճախ դրսևորվում են ոչ անմիջապես, այլ միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Այդ հանգամանքը բարդացնում է դրանց գնահատումը և պահանջում է խորքային վերլուծություն ու համապատասխան քանակական գնահատականների ու մակրոտնտեսական մոդելների մշակում: Բացի այդ, նույնատիպ բարեփոխումները տարբեր երկրներում կարող են տալ տարբեր արդյունքներ՝ կախված տնտեսության կառուցվածքից, ինստիտուցիոնալ համակարգի որակից և արտաքին միջավայրի ազդեցությունից:

Կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների գնահատման հիմնահարցերը Հայաստանում առավել քան կարևորվում են, քանի որ երկիրը կանգնած է կառուցվածքային այնպիսի մարտահրավերների առաջ, ինչպիսիք են ցածր արտադրողականությունը, տնտեսության բարձր կենտրոնացվածությունը, ոչ բավարար ինստիտուցիոնալ արդյունավետությունը և մարդկային կապիտալի զարգացման խնդիրները: Մյուս կողմից, Հայաստանի սահմանափակ ռեսուրսների պայմաններում կարևոր է

բարեփոխումների այնպիսի առաջնահերթությունների և դրանց համախմբի սահմանումն ու իրականացումը, որը առավելագույնս կնպաստի տնտեսական տարբերակվածության մեծացմանը, ներդրումների աճին, կայուն զբաղվածությանը և աղքատության հաղթահարմանը:

Այսպիսով, Նարինե Բագրատի Պետրոսյանի ատենախոսությունում ներկայացված և հետազոտված այս հիմնախնդիրների գիտագործնական բնույթը, ինչպես նաև դրանց լուծման ուղղությունների հրատապությունը պայմանավորում են թեմայի արդիականությունը:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանում իրականացված և շարունակվող բարեփոխումների բնույթի և դրա մակրոտնտեսական ազդեցությունն ապահովող կառուցվածքային բարեփոխումների ուղղությունների մակրոտնտեսական ազդեցության մեխանիզմների ու գործիքների բացահայտումն է, ինչպես նաև դրանց կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Ատենախոսության նպատակով պայմանավորված առաջադրվել են ներքոհիշյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ առկա տեսությունները և հայեցակարգային մոտեցումները, պարզաբանել «կառուցվածքային բարեփոխում» և «կառուցվածքային փոփոխություն» հասկացությունների տարբերություններն ու փոխկապվածությունը, հետազոտել կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների տեսամեթոդաբանական հիմքերն ու մոտեցումները:

- Հիմնվելով միջազգային հեղինակավոր ինդեքսների վրա, գնահատել կառուցվածքային բարեփոխումների ընթացքը Հայաստանում, այս ոլորտում ձեռքբերումներն ու բացերը տարածաշրջանի երկրների, այլ երկրների և դրանց խմբերի համեմատ:

- Գնահատել Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների ճեղքը՝ բարեփոխումների համապատասխան համախմբի ընտրության և թիրախայնության բարձրացման ուղղությունների բացահայտման նպատակով:

- Կառուցվածքային բարեփոխումների և առանձին վերցված հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցության գնահատման նպատակով մշակել այդ բարեփոխումների քանակական բնութագրիչներ՝ ինդեքսներ, առաջնորդվելով բարեփոխումների առանցքային ուղղություններով:

- Հետազոտել, գնահատել և վերլուծել համակցված և հատվածային ընդհանուր կառուցվածքային բարեփոխումների, ինչպես նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների առանձին ուղղությունների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

- Վերլուծել «Կառուցվածքային բարեփոխումների ծուղակի» հիմնախնդիրը և Հայաստանում վերջինիս դրևորման ուղղություններն ու առանձնահատկությունները՝ կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցությունների և դրանց արդյունավետության տեսանկյունից:

### **Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը**

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 187 էջից՝ առանց հավելվածների:

Ատենախոսության «**Ներածություն**» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օրյեկտն ու առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքները և նորույթը, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտության առաջին՝ «**Կառուցվածքային բարեփոխումներ**» հասկացությունը և դրա ուսումնասիրության տեսամեթոդաբանական ասպեկտները» գլխում վերլուծվել են կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ հիմնական տեսությունները, դրանց զարգացման ժամանակագրությունը, տրամաբանությունը, փուլայնությունը, ինչպես նաև դրանց համահունչ բարեփոխումների իրականացման միջազգային փորձը: Այս վերլուծության հիման վրա հեղինակը առաջարկել է կառուցվածքային բարեփոխումներ հասկացության համապարփակ և համընդգրկուն ձևակերպում, որն առավել համապատասխանում է գլոբալ տնտեսության, պետական կառավարման համակարգերի և հասարակության զարգացման ժամանակակից միտումներին, թվայնացման, կլիմայական փոփոխությունների, կանաչ զարգացման և սոցիալական արդարության առկա մարտահրավերներին: Հեղինակը դիտարկել է նաև «կառուցվածքային բարեփոխում» և «կառուցվածքային վերափոխում» եզրույթները, դրանց փոխադարձ կապերը, փոխազդեցությունները, առանցքային ընդհանրություններն ու տարբերությունները: Այս գլխում համադրվել են նաև կառուցվածքային բարեփոխումների և տնտեսական աճի միջև փոխկապվածության վերաբերյալ բազմաթիվ տեսական մեկնաբանություններ և քանակական վերլուծությունների վրա հիմնված հետազոտություններ: Անդրադարձ է կատարվել նաև հայկական գիտական ոլորտում կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ առկա թերևս սակավ հետազոտություններին :

Ատենախոսության երկրորդ՝ «Մակրոտնտեսական ցուցանիշների վրա կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունների վերլուծությունը և գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» գլխում հեղինակը հետազոտել է կառուցվածքային բարեփոխումները բնութագրող միջազգայնորեն ճանաչված ինդեքսները, այդ թվում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՁԵԲ) անցումային տնտեսությունների ցուցիչը ըստ առանձին հենասյուների՝ ներկայացնելով նաև Հայաստանի դիրքը հարևան երկրների և երկրների խմբերի նկատմամբ, Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող համաշխարհային կառավարման ցուցիչը՝ ըստ կառավարման որակը գնահատող հենասյուների՝ համեմատականներ անց կացնելով Հայաստանի և տարածաշրջանի առանձին երկրների միջև:

Գլուխ մրցունակության ինդեքսի և ՎՁԵԲ-ի անցումային տնտեսությունների ցուցիչի տվյալների հիման վրա հեղինակը գնահատել է նաև կառուցվածքային բարեփոխումների ճեղքը Հայաստանում: Արդյունքում, բացահայտվել են կառուցվածքային բարեփոխումների այն ոլորտները, որոնց գծով առկա ճեղքը առավել մեծ է և պայմանավորում է համադրելի երկրների և երկրների խմբի համեմատ Հայաստանում մեկ շնչի հաշվով ավելի ցածր եկամուտը: Գնահատումը կատարվել է պանելային-ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Կառուցվածքային բարեփոխումների քանակական բնութագրիչներ ստանալու նպատակով հեղինակը ձևավորել, հաշվարկել, վերլուծել և գնահատել է Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը, ինչպես նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը՝ կիրառելով գլխավոր բաղադրիչների վերլուծության մեթոդը և հիմնվելով Արժույթի միջազգային հիմնադրամի ֆինանսավորման միջոցառումների մոնիթորինգի տվյալների շտեմարանի վրա: Արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ ֆինանսական և հարկաբյուջետային բարեփոխումները եղել են ընդհանուր բարեփոխումների հիմնական շարժիչ ուժը: Հաշվի առնելով այս հանգամանքը, հեղինակը կառուցել է նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքս, որի մեթոդաբանության հիմնական բաղադրիչը հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների դասակարգումն է երեք կատեգորիաներում՝ եկամտային, ծախսային և ինստիտուցիոնալ: Հատկանշական է, որ հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը թույլ է տվել հեղինակին բացահայտել նաև քաղաքական բիզնես ցիկլերի վարքագիծը Հայաստանում, ինչպես նաև ինդեքսի առանձին ենթաբաղադրիչների գերիշխող ազդեցությունները տնտեսության զարգացման տարբեր ժամանակահատվածներում: Այս գլխում ձևակերպվել են ատենախոսության առաջին և երկրորդ գիտական նորույթները:

Ատենախոսության երրորդ՝ «Կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության բարելավման ուղիներն ու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»

գլխում հեղինակը կառուցվածքային վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելների միջոցով գնահատել է կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունը չորս առանցքային ուղղություններով (իրական, հարկաբյուջետային, դրամավարկային հատվածներ և աշխատանքի շուկա) և համակցված մակրոտնտեսական հիմնական փոփոխականների վրա՝ արդեն իսկ ստացված կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը դիտարկելով որպես կառուցվածքային քաղաքականության շոկ: Դարձյալ նույն մեթոդաբանության հիման վրա առանձին գնահատվել է հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունը բարեփոխումների արդյունավետության բարելավման համատեքստում՝ եզրահանգելով, որ այս բարեփոխումների շոկերը ավելացնում են հարկային եկամուտները, նվազեցնում պետական պարտքը, բարձրացնում արտադրողականությունը, նպաստում մասնավոր սպառման ակտիվացմանը և գնաճի չափավորմանը: Հեղինակը քննարկել է նաև «Կառուցվածքային բարեփոխումների ծուղակի» հիմնախնդիրները և դրա դրսևորումը Հայաստանում՝ բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցությունների և դրանց արդյունավետության տեսանկյունից՝ հիմնվելով նաև նախորդ ենթագլուխներում ստացված արձագանքման ինտենսիվության գնահատականների վրա: Որպես արդյունք, հեղինակի կողմից առաջարկվել են նաև կառուցվածքային բարեփոխումների ծուղակից դուրս գալու ուղղություններ, այդ թվում բարեփոխումների հիմնավորվածության, թափանցիկության մեծացումը, դրանց նկատմամբ վստահության բարձրացումը, բարեփոխումներին հանրային մասնակցության ապահովումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդումը: Այս գլխում է ձևակերպվել են ատենախոսության երրորդ և չորրորդ գլխական նորությունները:

**«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական եզրահանգումները և ստացված արդյունքները:

### **Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը**

Ատենախոսության հետազոտության օբյեկտը Հայաստանում իրականացված կառուցվածքային բարեփոխումներն են, իսկ առարկան՝ մակրոտնտեսական ցուցանիշների վրա կառուցվածքային բարեփոխումների ազդեցության գնահատումն է, ինչպես նաև այդ ազդեցությունը պայմանավորող գործոնների և պայմանների համախումբը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել տնտեսական քաղաքականության առաջնահերթ ուղղությունների մշակման, մակրոտնտեսական կանխատեսումների և բյուջետային պլանավորման արդյունավետության բարձրացման, այս ոլորտների իրավական ու ինստիտուցիոնալ

կառուցակարգերի կատարելագործման, ինչպես նաև արդեն իսկ իրականացված բարեփոխումների ազդեցությունների գնահատման նպատակով:

### **Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը**

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալում.

- Մշակվել է կառուցվածքային բարեփոխումների ճեղքի գնահատման մոդել, որը հնարավորություն է տալիս բացահայտել տնտեսության այն ոլորտները և տնտեսական քաղաքականության այն ուղղությունները, որտեղ առավել մեծ է կառուցվածքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ տնտեսության զարգացման նպատակային թիրախներին հասնելու նպատակով:

- Մշակվել են կառուցվածքային բարեփոխումների ընդհանուր և հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների առանձին ինդեքսներ, որոնք հնարավորություն են տալիս վերլուծել և գնահատել բարեփոխումների ինտենսիվությունը՝ ելնելով դրանց մակրոտնտեսական նշանակությունից և իրականացման աստիճանից:

- Կառուցվել է վեկտորական-ավտոռեգրեսիոն մոդել, որի միջոցով բացահայտվել է համակցված և հատվածային ընդհանուր կառուցվածքային բարեփոխումների շուկերի նկատմամբ հիմնարար մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքի բնույթն ու ուղղությունը, ինչպես նաև գնահատվել է ազդեցության չափն ու տևողությունը:

- Կառուցվել է վեկտորական-ավտոռեգրեսիոն առանձին մոդել, որի միջոցով բացահայտվել է հարկաբյուջետային ոլորտում կառուցվածքային բարեփոխումների շուկերի նկատմամբ հիմնարար մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքի բնույթն ու ուղղությունը, ինչպես նաև գնահատվել է դրանց ազդեցության չափն ու տևողությունը:

### **Ատենախոսության վերաբերյալ մեր կողմից ներկայացվում են հետևյալ դիտողությունները.**

- Հետազոտության 3-րդ գլխում նշվում է, որ մակրոտնտեսական ցուցանիշների տատանողականության դեկոմպոզիցիան դիտարկված բոլոր մոդելների պարագայում արտացոլում է հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների համեմատաբար փոքր ներդրման չափը, որի հիման վրա հեղինակը եզրակացրել է, որ բարեփոխումները դեռևս ամբողջապես չեն ինտեգրվում հայաստանյան տնտեսական դաշտ և բավարար չափով չեն նպաստում մակրոտնտեսական հիմնարարների առաջընթացին: Կարծում ենք, որ այս եզրակացությունը միանշանակ չէ երկու հիմնական հանգամանքներով պայմանավորված: Նախ, Հայաստանի որպես փոքր բաց տնտեսության և այն բնութագրող ցուցանիշների վրա ազդում են բազմաթիվ այլ տնտեսական և ոչ տնտեսական գործոններ և շուկեր, հետևաբար վերջիններս կարող

են պայմանավորել ցուցանիշների տատանումների զգալի մասը: Եվ երկրորդ, Արժույթի միջազգային հիմնադրամի և կառավարության կողմից համատեղ սահմանվող կառուցվածքային բարեփոխումները, այդ թվում հարկաբյուջետային, որոնց հիման վրա գնահատվել է համապատասխան ինդեքս և օգտագործվել SVAR մոդելում, համապարփակ և համընդգրկուն չեն (ինչը ի դեպ նշվում է նաև ատենախոսության երկրորդ գլխում)՝ չնայած, որպես կանոն, համատեղ եռամյա ծրագրերում նպատակ է դրվում ներառել մակրոտնտեսական մասշտաբով առավել նշանակալի ակնկալվող ազդեցություն ունեցող հենանիշներ: Կառավարությունն իր ծրագրերում և այլ միջազգային կառույցների հետ համատեղ ծրագրերում ևս սահմանում է ոլորտային, այդ թվում հարկաբյուջետային, ինստիտուցիոնալ, իրավական, բիզնես միջավայրի և հանրային կառավարման բարելավման կառուցվածքային բարեփոխումների հենանիշներ: Հետևաբար, այս հանգամանքը ևս կարող էր պայմանավորել հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների շուրջին մակրոտնտեսական ցուցանիշների տատանողականության ոչ բարձր արձագանքը:

- Նշելով Հայաստանում բարեփոխումների ոլորտների «անհավասար առաջնահերթությունների և կառուցվածքային բարեփոխումների ինդեքսում ոլորտային նպաստումների» մասին, հեղինակը նշում է, որ սոցիալական և դրամավարկային բարեփոխումները խաղացել են ավելի սահմանափակ դեր, սակայն կոնկրետ դրամավարկային քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ այս պնդումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ ինչպես հեղինակն է նշում ֆինանսական բարեփոխումները՝ հարկաբյուջետային բարեփոխումների հետ միասին, եղել են ընդհանուր բարեփոխումների շարժիչ ուժը, իսկ ֆինանսական բարեփոխումները, որոնք պատմականորեն ընդգրկել են Հայաստանում կապիտալի շուկայի զարգացման, բանկային իրացվելիության արդյունավետ կառավարման և այլ միջոցառումներ, շատ հաճախ նպատակ են ունեցել բարելավել նաև դրամավարկային քաղաքականության ազդեցության փոխանցման շղթաների գործողության արդյունավետությունը: Իսկ ուղղակիորեն դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ Կենտրոնական բանկը բազմաթիվ բարեփոխումներ է իրականացրել, որոնք ունենալով շարունակական բնույթ ոչ միշտ են արտացոլվել Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ սահմանվող հենանիշների համակարգում, հետևաբար նաև գնահատված ինդեքսում: Այդ շարքում կցանկանայինք առանձնացնել հատկապես կանխատեսումների մշակման և քաղաքականության վերլուծության նոր համակարգի (FPAS Mark II) ներդրումը 2023 թվականից, որը նպատակ ուներ գնաճը դարձնել ավելի վերահսկելի, նպաստել տնտեսության կայուն զարգացմանը և դրամավարկային քաղաքականությունը դարձնել առավել կանխատեսելի ու վստահելի:

• Հետազոտությունը կշահեր նաև, եթե հեղինակը համեմատականներ անց կացներ Արժույթի միջազգային հիմնադրամի «Կառուցվածքային բարեփոխումներ և տնտեսական աճ: Մեքենայական ուսուցման մոտեցում» աշխատանքային փաստաթղթի արդյունքների հետ, որի հեղինակները 126 երկրների մեծաթիվ կառուցվածքային ցուցանիշները խմբավորել են մի քանի սինթետիկ միավորներում և վերլուծել կառուցվածքային ոլորտներում (ապրանքային, աշխատանքի, ֆինանսական շուկաներ և իրավական համակարգ) բարեփոխումների ազդեցությունը տնտեսական աճի վրա: Հատկանշական է, որ այս հետազոտության արդյունքները ևս հանգում են նրան, որ կառուցվածքային բարեփոխումները միջինում դրական ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա, սակայն այդ ազդեցությունը կախված է երկրի զարգացման մակարդակից, ինստիտուցիոնալ կառուցակարգերի կայացվածությունից և ընդհանուր մակրոտնտեսական միջավայրից: Նշվում է նաև, որ որոշ բարեփոխումների ազդեցությունը արտահայտվում է մի քանի տարվա ընթացքում:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Վերոնշյալ դիտողությունները էական ազդեցություն չեն ունեցել ատենախոսության արդյունքների վրա: **Նարինե Բագրատի Պետրոսյանի՝ «Կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների գնահատումը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների ուղղությունների և դրանց արդյունավետ համախմբի ընտրության, թիրախայնության, ազդեցության քանակական գնահատման տեսական և գործնական կարևորություն ունեցող խնդիրներ: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ, որոնք կարող են նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքականությունների, այդ թվում հարկաբյուջետային քաղաքականության, առաջնահերթ ուղղությունների և դրանց արդյունավետ համախմբի մշակմանը, ինչպես նաև դրանց մակրոտնտեսական հետևանքների գնահատմանը:

Հետազոտության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, գեկուցվել են մի շարք գիտաժողովներում և աշխատաժողովներում և քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարությունում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու



բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 7 (յոթ) գիտական հոդվածներում, որից չորսը ներառված են SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ՀՀ ԿԳՄՍ ԲԿԳԿ-ի պահանջներից ելնելով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ արտացոլելով դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Նարինե Բազրատի Պետրոսյանի՝ «Կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների գնահատումը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՄ

Հայաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի  
մշտական ներկայացուցչության տնտեսագետ,  
տնտեսագիտության թեկնածու՝



Վահրամ Ջանվեյան


Աշխատավայրից տեղեկանքը կցվում է:

Հունվար 20, 2026

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Վահրամ Սամվելի Ջանվելյանին առ այն, որ նա 2013 թվականի դեկտեմբերի 16-ից մինչ այժմ աշխատում է Արժույթի միջազգային հիմնադրամի Հայաստանյան ներկայացուցչությունում որպես տնտեսագետ:

Հարգանքով,

  
Ումանգ Ռավաթ

Արժույթի միջազգային հիմնադրամի  
Հայաստանյան ներկայացուցչություն

Հեռ.: 010 - 52 89 60

Փ.հ.: URawat@imf.org

